**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

15.11.2019թ.
ժամը $15^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ՁԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ՁԲՖ ԾԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ՁԲՖԾ առաջատար մասնագետ Ռ. Չաթոյանը:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Լ. Թազայան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Լ. Թազայան)

*1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ «Օստինատո» ՍՊԸ-ի.* մասնավորապես ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.11.2019թ. տրամադրված եզրակացության հիման վրա «Օստինատո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ուներ ժամկետանց պարտավորություններ (324 երեք հարյուր քսանչորս ՀՀ դրամ): Քանի որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը չէր գերազանցում «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված չափը և ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան):

1.2 06.11.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ցանկում կազմակերպությունների անունները լրիվ չէր նշված, սակայն 07.11.2019թ. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ճշտված եզրակացություն /տեղեկատվություն/, որի համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ցանկում նշված էր բոլոր կազմակերպությունների անունները:

1.3 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված)՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերն և իր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերն (տեխնիկական բնութագրերն) ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի

իրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Ռաֆ-Օջախ» և «Եթերակ» ՍՊԸ-ների ներկայացված որակավորման փաստաթղթերի, մասնավորապես՝

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը որակավորման չափորոշիչը գնահատելու համար ներկայացված նախկինում կատարված պայմանագրով նախատեսված է մատակարարել 1600 գծ/մ մետաղական խողովակ՝ ընդհանուր 336,000,000 ՀՀ դրամ արժեքով, սակայն նույն պայմանագրին կից հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ մատակարարվել է ընդամենը 1,501.67 գծ/մ մտաղական խողովակ՝ ընդհանուր 315,350,700 ՀՀ դրամ արժեքով:

«Եթերակ» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառությունը որակավորման չափորոշիչը գնահատելու համար ներկայացված նախկինում կատարված պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ 7,266,000 ՀՀ դրամով պակաս է ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ելնելով վերոգրյալից՝ 11.11.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին և «Եթերակ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

15.11.2019թ. գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Ռաֆ-Օջախ» և «Եթերակ» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում շտկվել են ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և հանձնաժողովը մասնակիցների որակավորման փաստաթղթերը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

1.4 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) և որոշեց վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է կողմ՝ 4, դեմ՝ 0:*

2. **Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11[00]-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող** ... **ԱՊ)** Ա. Մուրադյան

**Գնահատող** ... Ա. Պապյան

**Գնահատող** ... Ա. Սաֆարյան

**Գնահատող** ... Ռ. Չաթոյան

**Գնումների համակարգող** Լ. Թազայան